

04.03.26 - 04.03.26

13:00

Անցանց

Գրանցումը փակ է



[Պահպանել Google օրացույցում](#)

ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 311 լսարան

Ս.թ. մարտի 4-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 311 լսարանում տեղի կունենա հանդիպում Տոկիոյի համալսարանի պրոֆեսոր Էյզաբուրո Տանակայի հետ:

Հանդիպման ընթացքում Էյզաբուրո Տանակայն հանդես կգա «Ինչպես աջակցել երեխաների հոգեկան առողջությանը բնական և մարդածին աղետներից հետո. հոգեբանական առաջին օգնությունից մինչև տրավմային ուղղված կոգնիտիվ-վարքաբանական թերապիա» թեմայով դասախոսությամբ:

Պրոֆեսոր Էյզաբուրո Տանակայն Տոկիոյի համալսարանի խորհրդատվության և աջակցության ծառայությունների հետազոտական կենտրոնի հոգեբուժության և հանրային առողջության ոլորտի առաջատար գիտնական է: Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական ուղղություններն են գլոբալ հոգեկան առողջությունը, բարեկեցությունը, սոցիալական անհավասարությունը, հումանիտար ճգնաժամերը, ինչպես նաև բնական և մարդկային գործոններով պայմանավորված աղետներից հետո հոգեկան առողջության խնդիրները:

Պրոֆեսորի մասին ավելին՝ [այստեղ](#):

Մուտքն ազատ է:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am